Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Ազատ գետի զմրու-տաշող ափին վիմակո- հրվանդանի վրա հառնում է Գառնո տաճարը հիմնված մեր թվարկության առաջին դարում:

Բյուզանդական կայսր Ներոնի կողմից թագադրվելուց հետո հայոց արքան Տիգրան Մեծը շրջեց Հռոմում ծանոթանալու հյուր-նկալ քաղաքի պերճ շինություններին: Զմայլված երկնամու- կառույցներով արքան աչքերը հառած անձեռակերտ տաճարներին մտովի որոշեց Հայրենիք վերադառնամ կկառուցեմ հար և նման բարձրասյուն շինվածք և այն իր տեսքով կլինի նույնքան հիասքանչ ու փառահեղ ինչպես այս տաճարը:

Գառնիի մոխրագույն որ-աքարից կառուցված կոթողը Հայաստանում միակ հեթանոսական տաճարն է որ պահպանվել է հայերի կողմից քրիստոնեությունը ընդունելուց հետո: Ենթադրվում է այն նվիրված է եղել Միհրին նա հայոց դիցարանում արեգակի լույսի աստվածն է: Ինքնատիպ ոճով կառուցված ան-ստգյուտ շինվածքը հիացնում է նրբին քանդակներով վերձիգ սյուները ոլորապտույտ խոյակներով օրվա քսանչորս ժամերը խորհրդանշող ողոր- մույ-երը իրենց վեհությամբ: Անփորձ աչքի համար առե-ծված է ինչպես են քարերը միմ-նց ագուցվել առանց շաղախի ասես խա-կանք է կամ մտա-ածին դյութանք այլ ոչ թե իրական հորինվածք: Սակայն մանրազ-ին ուսումնասիրելով հասկանում ես դրանք միացած են երկծայր գամերով մխրճված արճճի մեջ:

Տաճարը փլուզվել էր 1679 թվականի ահագնասա-սուռ երկրաշարժի հետևանքով ու հիմնովին վերականգնվեց միայն երեք հարյուր տարի հետո: Եվ այսօր նա իր վեհապան- կեցվածքով ասես մարտահրավեր է նետում դարերին:

1. Լրացրո՛ւ տեքստի բառերում բաց թողնված տառերը: (3 միավոր)
2. Կետադրի՛ր բնագիրը: (3 միավոր)
3. Նշի՛ր տեքստում ընդգկված բարդ համադասական և բարդ ստորադասական բոլոր այն նախադասությունները, որոնց բաղադրիչները միացած են շարահարությամբ (նախադասության վերևում գրել տեսակը): (2 միավոր)
4. Տրված բառերը վերլուծի՛ր բառակազմորեն. ընդգծի՛ր արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով: Վերականգնի՛ր հնչյունափոխված արմատներն ու ածանցները.
   բնօրինակ, սառցաբեկոր, հետնամուտք, ահագնատես, քառակուսի: (2 միավոր)
5. Գրի՛ր *վեհերոտ, քենակալ, ճամարտակել, երասան, եղրևանի, թարփ, տարփողել, լախտ, խոչակ, աչառու* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակազմությամբ: (2 միավոր)
6. Տրված բարդ ստորադասական նախադասությունը վերածի՛ր պարզի:
   Երբ խիզախ հայորդիները կառավարությունից գաղտնի օտար ափերից հայրենիք վերադարձրին մեծ զորավարի նշխարները, Խուստուփը, որ Նժդեհի անձեռակերտ հուշարձանն է, վերջապես ընդունեց հերոսի մասունքները : (2 միավոր)
7. Բացատրի՛ր *աքիլլեսյան գարշապար, դամոկլյան սուր* թևավոր խոսքերը: (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Անտառային հեքիաթ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)